Կարգապահական գործ թիվ ԿԳ-23020

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՆԵԼԼԻ ՆՈՐԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Գուրգեն Թորոսյանի, Միքայել Դանիելյանի, Կարինե Բաղդասարյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Փաստաբան՝ Նելլի Մովսիսյանի,

քննության առնելով փաստաբան Նելլի Նորիկի Մովսիսյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 845), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

<u>1.1 Կարգապահական վարույթ հարուցելու առիթը</u>

«Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հաղորդումը:*

Տվյալ դեպքում Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթը 2023 թվականի մարտի 30-ին Բարսեղ Մանուկի Նադալյանի **(այսուհետ նաև՝ Դիմող)** անունից ՀՀ փաստաբանների պալատում (այսուհետ՝ նաև Պալատ) մուտքագրված «բողոք» վերտառությամբ դիմումն է:

1.2 Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, իսկ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի և «Անկանխիկ գործառնությունների մասին» օրենքի կամ դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելու համար՝ կարգապահական, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ ի թիվս այլնի, Օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են:*

Դիմումով Դիմողը Պալատին հայտնել է, որ իրավաբանական օգնություն ստանալու համար 2022 թվականի ամռանը դիմել է Պալատի փաստաբան Նելլի Մովսիսյանին /արտոնագիր թիվ՝ 845, հեռախոս 093 68 88 82, հասցեն՝ ք. Երևան, Գալշոյան փողոց, 22 շենք, բն. 13/:

Առանց իր և վերջինիս միջև իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու՝ Դիմողը Փաստաբանին առձեռն վճարել է 1500 /հազար հինգ հարյուր/ ԱՄՆ դոլար: Նշված գումարի դիմաց փաստաբանը պարտավորվել է հայցադիմում ներկայացնել ՀՀ Վարչական դատարան էլեկտրոնային աճուրդը վիճարկելու համար:

28.11.2022 թվականին՝ բազմաթիվ սխալներով, Փաստաբանը Դիմողի ստորագրությունը կեղծելու միջոցով Վարչական դատարան է մուտքագրել հայցադիմում

ընդդեմ Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Ռուզաննա Մալխասյանի՝ 28.11.2017 թվականին անցկացված հարկադիր էլեկտրոնային աճուրդն անվավեր ճանաչելու և որպես հետևանք՝ 24.05.2022 թվականի անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

02.12.2022 թվականին ՀՀ Վարչական դատարանը ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժել է և տրամադրել է 5 օր՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան բողոքարկելու համար և տասնհինգօրյա ժամկետ՝ կրկին ներկայացնելու համար:

12.12.2022 թվականին նույն ձևով՝ Դիմողի ստորագրությունը կեղծելու միջոցով, հայցադիմումը Փաստաբանի կողմից կրկին ներկայացվել է:

16.12.2022 թվականին ՀՀ վարչական դատարանի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձրել է և տրամադրել է 5 օր՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարան բողոքարկելու համար և տասնհինգօրյա ժամկետ՝ կրկին ներկայացնելու համար: Նշված որոշման կայացումից հետո փաստաբանը որոշումը չի բողոքարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան և այն տասնհինգօրյա ժամկետում կրկին չի ներկայացրել, որի հետևանքով Դիմողը և իր ընտանիքի անդամները կանգնած են փողոցում հայտնվելու վտանգի առաջ:

Դիմողը բազմիցս զանգահարել է Փաստաբանին, պահանջել, որպեսզի Փաստաբանն իրեն վերադարձնի իր կողմից վճարված 1500 ԱՄՆ-ի դոլարը և բացի այդ իրեն պատասխանի, թե ինչու է իր ստորագրությունը կեղծելու միջոցով հայցադիմում ներկայացրել դատարան և ինչու 16.12.2022 թվականի վարչական դատարանի որոշումը 5 օրյա ժամկետում չի բողոքարկել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան և տասնհինգօրյա ժամկետում կրկին չի ներկայացրել վարչական դատարան, սակայն Փաստաբանը տարբեր պատճառաբանություններով և փաստաբանին ոչ հարիր բառապաշարով խուսափում էր:

Ելնելով վերոգրյալից խնդրել է փաստաբան Նելլի Մովսիսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Դիմողը, պատշաճ ծանուցված լինելով Հանձնաժողովի նիստի օրվա, ժամի և վայրի վերաբերյալ, չի ներկայացել 2023 թվականի օգոստոսի 17-ին, ժամը՝ 19:30-ին և 2023 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը՝ 20:00-ին նշանակված Հանձնաժողովի նիստերին:

2. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունները</u>.

Փաստաբանը 2023 թվականի ապրիլի 17-ի բացատրությամբ հայտնել է, որ 2022թ. օգոստոս ամսին իրավաբանական օգնություն ստանալու նպատակով իրեն է դիմել Բարսեղ Նադոյանը: Դիմողի հետ 15.08.2022թ. կնքվել է ծառայությունների մատուցման № 015 պայմանագիրը, և Փաստաբանին է տրվել համապատասխան լիազորագիր:

Բացատրությամբ փաստաբանը հայտնել է, որ Դիմողը գործը ներկայացնելուց

իրեն սուտ տեղեկություններ է հայտնել, ինչը Փաստաբանին հայտնի դառնալուն պես վերջինս պարզաբանել է Դիմողին, որ այդպիսի պարագայում որևէ հնարավորություն չկա այդ գործում դրական ելք ակնկալելու համար և չի ցանկանում շարունակել վարել այդ գործը: Այնուհետև ըստ Փաստաբանի՝ Դիմողի խնդրանքով ինքը համաձայնվել է Դիմողի համար ժամանակ շահելու նպատակով հայցադիմումներ ներկայացնել ՀՀ վարչական դատարան: Փաստաբանը հայտնել է նաև, որ բանակցությունների և հանդիպումների միջոցով նույնպես ջանքեր է գործադրել վստահորդի համար ժամանակ շահելու համար:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 05.06.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 2023 թվականի հունիսի 13-ի բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը՝ հավելելով, որ երկրորդ անգամ վերադարձված հայցադիմումը ներկայացնելուց հետո Դիմողն իրեն հայտնել է, որ չի ցանկանում գործը շարունակել՝ խնդրելով գործը հետ վերցնել դատարանից:

Փաստաբանը 2023 թվականի հունիսի 15-ին ի լրումն իր բացատրությանը ներկայացրել է՝ թիվ ՎԴ/6727/05/22 և ՎԴ/7401/05/22 վարչական գործերի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությունը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի միջև նամակագրության պատճենները:

Փաստաբանը ներկայացել է 2023 թվականի օգոստոսի 17-ին, ժամը՝ 19:30-ին և 2023 թվականի սեպտեմբերի 20-ին, ժամը՝ 20:00-ին նշանակված Հանձնաժողովի նիստերին և պնդել իր գրավոր բացատրություններում նշված դիրքորոշումը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.04.2023թ. թիվ 121-Ա/ԿԳ-23020 որոշմամբ փաստաբան Նելլի Նորիկի Մովսիսյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2 և 3.8.4 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

08.05.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

2023 թվականի սեպտեմբերի 13-ին Փաստաբանը Պալատ է մուտքագրել դիմում,

որով ըստ էության խնդրել է որպես վկա ներգրավել Նաիրա Նորիկի Երեմյանին, Արա Սարգսյանին և Հայկ Հովսեփյանին, ինչպես նաև թույլատրել որպես ապացույց ներկայացնել նույն դիմումին կից ներկայացված Արա Սարգսյանի և Հայկ Հովսեփյանի կողմից գրված հայտարարությունները:

Սույն կարգապահական գործով 2023 թվականի սեպտեմբերի 20-ին ժամը 20:00-ին՝ նշանակված նիստի ժամանակ Հանձնաժողովը որոշեց բավարարել միջնորդությունը և որպես վկա հրավիրել Երեմյան Նաիրային (**այսուհետ՝ Վկա**) Փաստաբանի կողմից կատարված հսկայածավալ աշխատանքների վերաբերյալ ցուցմունք տալու համար: Հանձնաժողովի նիստում Վկան հայտնեց, որ Նելլի Մովսիսյանի հետ աշխատել է «ՎԻՊԳԱՐԴ» ՍՊԸ-ում, որտեղ ներկայացել է նաև Բարսեղը, ազգանունը չի կարող հիշել: Ինքը եկել է տիկին Նելլիի մոտ իր անձնական գործով:

Ի թիվս այլ փաստերի՝ Վկան, պատասխանելով Հանձնաժողովի անդամ Գուրգեն Թորոսյանի այն հարցին, թե Բարսեղ Նադոյանը բողոք է ներկայացրել առ այն, որ վճարել է Փաստաբանին, և երկրորդը՝ Փաստաբանը պատշաճ հայցադիմում չի ներկայացրել, ինչի հետևանքով հայցադիմումը վարույթ չի ընդունվել, ասել է հետևյալը.

«Պատշաճ հայցադիմումի մասով կարող եմ հստակ ասել, որ նորից եմ ասում, 2 օր անընդմեջ աշխատանքային գործառույթները թողել է տիկին Մովսիսյանը, որովհետև ես կադրերի պետն եմ եղել տվյալ հիմնարկում ու իրավաբանի հետ անընդհատ քննարկման գործեր են եղել, 2 օր շարունակ տիկին Մովսիսյանը թողել է աշխատանքային գործառույթներն ու Բարսեղի հայցադիմումը գրելու գործընթացով է զբաղված եղել»:

Այնուհետև Հանձնաժողովի անդամ Գուրգեն Թորոսյանը հարցրել է. «***Դուք 2 օր ժամանակ տրամադրելը համարում եք պատշա՞ճ»***: Նշված հարցին Վկան չի պատասխանել և, շարունակելով պատասխանել նախորդ հարցին, նշել է, որ.

«Ընթացքում նաև զանգել է Բարսեղի հայրն ու ասել, որ խնդրում եմ անպայման լինի, հաստատ գրում եք, չեք գրում, ծրարավորած ասենք, հայցադիմումը ծրարավորել է, դուրս է եկել ես դա տեսել եմ, բայց ուրիշ բան ես չեմ տեսել»:

Վկա Նաիրա Երեմյանը նաև ցուցմունք տվեց այն մասին, որ Փաստաբանը կատարել է հանդիպումներ ոստիկանությունում՝ մասնավորապես նշելով այն, որ գիշերը ժամը 8-ին Ոստիկանության Մասիսի աշխատակցի հետ է պայմանավորվածություն եղել, գիշերը 2:30-ի սահմաններում Փաստաբանը հետ է եկել տղամարդկանց հետ:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 3.07.2023թ. կազմել է եզրակացություն:

03.07.2023թ. սույն կարգապահական գործը հանձնվել է Հանձնաժողովին:

Եզրակացությամբ Աշխատակիցը հաստատված է համարել միայն սույն որոշման 5-

րդ բաժնում նշված փաստեր № 1, 2, 4, 7-9, 11, 14, 15-ը:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Նելլի Մովսիսյանը ստանձնել է Բարսեղ Նադոյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Ա/Ձ Նելլի Մովսիսյանի և Բարսեղ Նադոյանի միջև 15.08.2022թ. կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ № 015 պայմանագրի **(այսուհետ՝ Պայմանագիր)** պատճենով:*

2. Պայմանագրի 1.2 կետով Փաստաբանը պարտավորվել է իրականացնել հետևյալ իրավաբանական գործողությունները (ներկայացուցչությունը)՝ ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնել, իրավաբանական խորհրդատվություն մատուցել և այլ գործողություններ իրականացնել: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրով:*

3. Պայմանագրի առարկան կազմել է նաև Դիմողի ներկայացուցչությունը, այդ թվում նաև՝ դատական նիստերի մասնակցությունը միայն առաջին ատյանում՝ ՀՀ վարչական դատարանում: *Սույն փաստը հաստատվում է 2022 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում հայտնած Փաստաբանի բացատրությամբ:*

4. Դիմողը Փաստաբանին առձեռն վճարել է 1500 /հազար հինգ հարյուր/ ԱՄՆ դոլար: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի միջև առկա գրագրություններով:*

5. Փաստաբանը էլեկտրոնային աճուրդին վերաբերվող կատարողական վարույթի նյութերին ծանոթանալու համար ՀՀ Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն **(այսուհետ նաև՝ ՀԿԱԾ)** փաստաբանական հարցում չի կատարել: ՀԿԱԾ ուղղված դիմումը կազմվել և ներկայացվել է Դիմողի կողմից: *Սույն փաստը հաստատվում է 2022 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում հայտնած Փաստաբանի բացատրությամբ:*

6. Դիմողի դիմումին ՀԿԱԾ-ը պատասխանել է շուրջ 2 ամիս անց: *Սույն փաստը հաստատվում է 2022 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում հայտնած Փաստաբանի բացատրությամբ:*

7. Փաստաբանը Դիմողի անունից **վիճարկման հայց է** կազմել և 2022 թվականի նոյեմբերի 28-ին ներկայացրել **ՀՀ վարչական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանի** և ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության: Միաժամանակ Դիմողը միջնորդել է վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները **և կիրառել հայցի ապահովման միջոց:** *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքի պատճենով և 2022 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում Փաստաբանի հայտնած բացատրությամբ:*

8. Թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու և մասով վերադարձնելու մասին» որոշումը ստանալուց հետո Փաստաբանը կազմել և կրկին Դատարան է ներկայացրել հայցադիմումը, որից հետո Դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքի պատճենով:*

9. Թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով Փաստաբանը ուղղել է սխալները և դիմողի անունով կազմված հայցադիմումը կրկին ներկայացրել է ՀՀ վարչական դատարան: Այս անգամ ևս Դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, սակայն այլ պատճառաբանությամբ: Վերադարձի հիմք է եղել այն, որ ***հայցվորը չի ներկայացրել 16.05.2022 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին իրազեկվելու օրվա վերաբերյալ տեղեկություն և ապացույց:*** *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքի պատճենով:*

10. Հայցադիմումին կից ներկայացված միջնորդությամբ չի նշվել էլեկտրոնային աճուրդի մասին Դիմողի ծանուցված լինելու պահը, ինչպես նաև հայցադիմումը ներկայացնելու ժամկետը բաց թողնելու պատճառների հարգելի լինելու վերաբերյալ որևէ տվյալ: *Սույն փաստը հաստատվում է 2022 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստում Փաստաբանի հայտնած բացատրությամբ:*

11. Թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձնելուց հետո Փաստաբանը կրկին հայցադիմում չի ներկայացրել: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքի պատճենով:*

12. Թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացրել: *Սույն փաստը հաստատվում է «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքի պատճենով:*

13. Դիմողը հրաժարվել է Փաստաբանի կողմից մատուցվող ծառայություններից: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի միջև առկա գրագրություններով:*

14. Պայմանագիրը լուծվել է, և Փաստաբանը դադարեցրել է փաստաբանական ծառայություններ մատուցել դիմողին: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի միջև առկա գրագրություններով:*

15. Փաստաբանը գրությամբ գրել է, որ 50000 ՀՀ դրամ կվերադարձնի, գործում առկա չէ գումարը վերադարձնելու հետ կապված որևէ ապացույց: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի և Դիմողի միջև առկա գրագրություններով:*

16. Փաստաբանը Հանձնաժողովի նիստի ժամանակ հայտնեց, որ որևէ գումար չի վերադարձնելու և դեռ մի բան էլ ավել աշխատանք է կատարել: *Սույն փաստը*

հաստատվում է 2022 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում հայտնած Փաստաբանի բացատրությամբ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.

17. Փաստաբանը կեղծել է Դիմողի ստորագրությունը:

18. Փաստաբանը վերադարձրել է Դիմողին հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները:

19. Փաստաբանը վերադարձրել է հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը:

20. Փաստաբանը դիմողին բացատրել և գրավոր նախազգուշացում է վերցրել Դիմողից կրկին հայցադիմում չներկայացնելու և վերաքննիչ բողոք չներկայացնելու համար վրա հասնող իրավական հետևանքների մասին:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի և տեղեկանքի հավելվածի համաձայն՝ Նելլի Մովսիսյանը փաստաբան է հանդիսանում 14.10.2008թ. թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 կարգապահական տույժ՝ նկատողություն, որը ուժի մեջ մտած չէ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նելլի Մովսիսյանի արարքում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ, ուստի Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է

ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նելլի Մովսիսյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման համար հետևյալ պատճառաբանությամբ.

Հանձնաժողովը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության հարցը որոշելու համար անհրաժեշտ է համարում Փաստաբանին վերագրվող վերը նշված Կանոնագրքի առերևույթ խախտումներին անդրադառնալ առանձին-առանձին:

7.1 Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի ենթադրյալ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է* ***իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,*** *վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն,* ***հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի վերը նշված կանոնի բովանդակությունից պարզ է դառնում, որ Փաստաբանն իր մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում պարտավոր է իր վստահորդին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալ: Մասնավորապես՝ Փաստաբանը պարտավոր է ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելիս տիրապետել վարչական դատավարության իրավունքի ճյուղին, հանձնարարության պատշաճ կատարման համար կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Տվյալ դեպքում Փաստաբանին Կանոնագրքի 2.7.2 ենթակետով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք Փաստաբանը տվյալ դեպքին վերաբերելի մասով տիրապետել է ՀՀ վարչական դատավարության իրավունքի ճյուղին կամ, տիրապետելու պարագայում, գործե՞լ է արդյոք օրենսդրությանը համահունչ:

2. Արդյո՞ք Փաստաբանը կատարել է Դիմողի հանձնարարության կատարման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները:

Ա. Պատասխանելով առաջին հարցին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի **(այսուհետ՝ Օրենսգիրք)** 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***յուրաքանչյուր ֆիզիկական*** *կամ իրավաբանական* ***անձ*** *սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու* ***վարչական դատարան****, եթե համարում է, որ* ***պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի*** *կամ դրա պաշտոնատար անձի* ***վարչական ակտով,*** *գործողությամբ կամ անգործությամբ* ***խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝*** *Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները (…):*

Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***երրորդ անձինք այն ֆիզիկական*** *կամ իրավաբանական* ***անձինք են*** *կամ մարմինները,* ***որոնց իրավունքները շոշափվում են կամ անմիջականորեն կարող են շոշափվել գործի քննության արդյունքում ընդունվելիք դատական ակտով****, ինչպես նաև այն մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնց լիազորություններին առնչվում է կամ կարող է առնչվել ընդունվելիք դատական ակտը:*

Օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ նախադասությունների համաձայն՝ *Դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված այլ փաստաթղթերը վարչական դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է* ***բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը: Նման միջնորդությունը բավարարվում է****, եթե վարչական դատարանը համարում է, որ* ***անձը ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով:***

Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ***հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել՝ վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից:***

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝*** *սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով* ***իրազեկելուն հաջորդող օրվանից****, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:*

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *դատավորը* ***վերադարձնում է հայցադիմումը, եթե չեն պահպանվել սույն օրենսգրքի 73-րդ հոդվածի*** *և 74-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված՝* ***հայցադիմումին առաջադրվող պահանջները*** *(…):*

Օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *եթե հայցադիմումը*

ներկայացվել է դատավարական ժամկետը լրանալուց հետո, <u>ապա կարող է ներկայացվել հայցվորի միջնորդությունն այն վերականգնելու մասին</u>՝ ***դրանում նշելով բացթողնման պատճառները****:*

Օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե՝ հայցը* ***ենթակա չէ դատարանում քննության:***

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ***վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը*** *մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը,* ***բացառությամբ՝ այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ:***

Օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***հայցվորի միջնորդությամբ*** *վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ* ***սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով*** *նախատեսված դեպքերում* ***ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը****:*

Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պարտավորեցման, գործողության կատարման կամ ճանաչման*** *հայցերի դեպքում վարչական դատարանը դատավարության մասնակցի միջնորդությամբ* ***միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար****, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը:*

Վերը նշված իրավական նորմերի տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ եթե վարչական գործով հայցվորը ֆիզիկական անձ է, ապա ՀՀ վարչական դատարան հայցադիմումը կարող է ներկայացվել միայն պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի դեմ: Նշված հարաբերություններում որևէ այլ ֆիզիկական անձ չի կարող հանդես գալ որպես պատասխանող, իսկ նրա դեմ ներկայացված հայցը ենթակա չէ դատարանում քննության, սակայն բոլոր այն դեպքերում, երբ վարչական գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտը կարող է շոշափել այլ ֆիզիկական անձի շահերը, ապա հայցվորը կամ դատարանը կարող են այդ ֆիզիկական անձին ներգրավել որպես երրորդ անձ:

Վիճարկման հայցով ՀՀ վարչական դատարան հնարավոր է դիմել վարչական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: Ընդ որում վարչական ակտն ուժի մեջ է մտնում դրա մասին իրազեկվելու հաջորդ օրվանից: Նշված ժամկետը բաց թողնելու դեպքում անձը կարող է այն վերականգնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել, **հայցադիմումի կամ միջնորդության մեջ նշելով այն բաց թողնելու պատճառները:** Ժամկետը բաց թողնելու պատճառների վերաբերյալ նշումը չկատարելու դեպքում հայցադիմումը չի համապատասխանի Օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջներին, ինչը հիմք է այն վերադարձնելու համար: Ժամկետը բաց

թողնելու **միջնորդությունը բավարարվում է, եթե ժամկետի բացթողումը տեղի է ունեցել հարգելի պատճառներով:**

Միաժամանակ հայցի ապահովման միջնորդությանը կարող է ներկայացվել միայն պարտավորեցման, գործողությունների կատարման և ճանաչման հայցերով: Վիճարկման հայց ներկայացնելու դեպքում վարչական ակտի գործողությունը ավտոմատ կասեցվում է, ի թիվս այլնի բացառություն է կազմում այն վիճարկման հայցը, որով վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կայացված վարչական ակտը: Այդ դեպքում վարչական ակտի գործողությունն ավտոմատ չի կասեցվում, սակայն հայցվորն իրավունք ունի ներկայացնելու վարչական ակտը կասեցնելու միջնորդություն: Վարչական ակտի կասեցման հարցը լուծվում է միջնորդության քննության արդյունքում:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի նյութերում առկա՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքից երևում է, որ Դիմողը 2022 թվականի նոյեմբերի 28-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան **(այսուհետ նաև՝ Դատարան)** ընդդեմ Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանի և ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության: Միաժամանակ Դիմողը միջնորդել է վերականգնել բաց թողնված դատավարական ժամկետները և կիրառել հայցի ապահովման միջոց:

Նշված հայցի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով Դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 2-ին կայացրել է հայցադիմումի ընդունումը Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանի դեմ ներկայացված պահանջի մասով մերժելու, իսկ ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ ներկայացված պահանջի մասով վերադարձնելու մասին որոշումը:

Իր որոշման մեջ Դատարանը վկայակոչելով Օրենսգրքի 3-րդ հոդվածը, նշել է հետևյալը.

*«Տվյալ դեպքում **ֆիզիկական անձը դատարան հայցադիմում է ներկայացրել ընդդեմ ֆիզիկական անձանց:** Վերը նշված հոդվածի վերլուծությունից բխում է, որ **ֆիզիկական կամ իրավաբանական անձինք կարող են դիմել ՀՀ վարչական դատարան միայն վարչական մարմնի կամ վերջինիս պաշտոնատար** անձանց դեմ, քանի որ **վարչական դատարանը լուծում է վարչաիրավական բնույթ կրող հանրային իրավական վեճեր և ոչ թե՝ մասնավոր իրավունքի, որոնք կիրառվում են այլ եղանակով և այլ վարույթներում:***

*Սույն պարագայում հայցադիմումում **որպես պատասխանող նշվել է նաև Ռուզաննա Մալխասյանը, իսկ ֆիզիկական անձանց միջև վեճը ենթակա չէ վարչական դատարանում քննության**:»*

Վերը նշվածից ստացվում է, որ տվյալ դեպքում հայցադիմումի ընդունումը մասով մերժվել է, քանի որ Փաստաբանի կազմած հայցադիմումից ստացվում է այն, որ որպես հայցվոր հանդես եկող Դիմողը, լինելով ֆիզիկական անձ, հայցադիմում է

ներկայացնում ՀՀ վարչական դատարան մեկ այլ ֆիզիկական անձի՝ Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանի դեմ, մինչդեռ երկու ֆիզիկական անձանց միջև չեն կարող ծագել ինքնուրույն վարչաիրավական հարաբերություններ, հետևաբար սույն վարչական գործով Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանը չի կարող լինել պատասխանող, ինչը վարչական դատավարության օրենսդրության հստակ պահանջ է, որը չպահպանելը կարող է կասկածի տակ դնել իրավունքի համապատասխան ճյուղի նորմերին տիրապետելու հանգամանքը: Հանձնաժողովը հարկ է համարում նաև հավելել, որ, եթե Դիմողը կարծում էր, որ տվյալ վարչական գործով կայացվելիք եզրափակիչ դատական ակտը կարող է շոշափել Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանի շահերը, ապա կարող էր իր հայցադիմումի մեջ Ռուզաննա Զոհրաբի Մալխասյանին նշել որպես երրորդ անձ, բայց ոչ՝ որպես պատասխանող: Փաստաբանը հայցադիմումը կազմելիս հաշվի չի առել նշված հանգամանքը, ինչի հետևանքով հայցադիմումի ընդունումը մասով մերժվել է, և Դիմողի գործը Վարչական դատարանի կողմից քննության չի ընդունվել:

Թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու և մասով վերադարձնելու մասին» որոշումը ստանալուց հետո, Փաստաբանը կազմել և կրկին Դատարան է ներկայացրել հայցադիմումը, որից հետո Դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը: Որոշման պատճառաբանական մասում Դատարանը նշել է հետևյալը.

*«Տվյալ դեպքում հայցը դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետների որոշման, **բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ միջնորդությունը** քննարկելու և հայցադիմումի ընդունելության հարցի օբյեկտիվ լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված դատարանը գտնում է, որ <u>անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 16.05.2022 թվականին անցկացված հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին</u> **իրազեկվելու** <u>օրվա վերաբերյալ տեղեկատվություն և ապացույց»:</u>*

Փաստաբանը 2023 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ հայտնել է, որ երկու հայցադիմումներն էլ՝ և սկզբնական, և կրկին ներկայացվածը, ամբողջությամբ կազմել է ինքը: Ըստ էության, Փաստաբանը հայցադիմումը կազմելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ վիճարկման հայցը ժամկետի բաց թողումով ներկայացնելիս, երբ ներկայացնում է բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն՝ վարչական ակտի մասին ուշ իրազեկվելու հիմքով, ապա այդ միջնորդությամբ անհրաժեշտ է նշել վարչական ակտի (աճուրդի) իրազեկման օրը, որպեսզի Դատարանի համար պարզ լինի, թե որ օրվան հաջորդող օրվանից է պետք հաշվարկել երկամսյա ժամկետը հոսելու սկիզբը: Ընդ որում միջնորդության մեջ պետք է նշել ոչ միայն վարչական ակտի (աճուրդի) իրազեկման օրը, այլ նաև հայցադիմումի ներկայացման ժամկետը բաց թողնելու պատճառը, որպեսզի

Դատարանը կարողանա գնահատել այդ պատճառի հարգելի լինելու կամ չլինելու հարցը:

2023 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ Փաստաբանը կարդաց իր հայցադիմումը ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը, մասնավորապես՝ միջնորդությամբ վկայակոչված ՎԴՕ 54-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը:

Այնուհետև Հանձնաժողովի անդամ Հայկ Սահակյանը հարց տվեց.

«Փաստական փվյալը ո՞րն է, որ ի՞նչ է եղել, որի պատճառով, որ այսպես է եղել»:

Պատասխանելով այդ հարցին, Փաստաբանը կարդում է միջնորդության իրավական վերլուծությունը, նշելով հետևյալը. *«(...) Ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված ժամկետների ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ և բավարար միջոցներ դատարան դիմելու, դատավարությանը մասնակցելու, հիմնավորող ապացույցներ ներկայացնելու և այլ դատավարական գործողություններ իրականացնելու ուղղությամբ, սակայն **իր կամքից անկախ** պատճառներով բաց է թողել օրենքով սահմանված դատավարական ժամկետը»:*

Հանձնաժողովի անդամ Հայկ Սահակյանը, ընդհատելով, հարց տվեց.

*«Այ հիմա դրան պետք է հաջորդի **«այդ կամքից անկախն»** ի՞նչն եք գրել:*

Պատասխանելով նշված հարցին, Փաստաբանը շարունակում է կարդալ միջնորդության իրավական վերլուծությունը, այնուհետև հասնելով միջնորդության փաստերի վերլուծությանը կարդում է հետևյալը. *«**Որ ուշացումով եմ տեղեկացել**, որ տունը վաճառվել է էլեկտրոնային աճուրդով և դրանից հետո պատասխանողի ներկայացուցիչը հավաստիացնելով, որ հարցը կլուծեն դրական ձևով և տունը հետ կվերադարձնեն, **անկախ իմ կամքից բաց եմ թողել** դատավարական ժամկետը:»:*

Միջնորդության բովանդակությունից պարզ է դառնում, որ նախ՝ Փաստաբանը չի նշել, թե կոնկրետ որ օրն է Դիմողն իմացել աճուրդի մասին, բացի այդ, Փաստաբանը չի նշել ժամկետը բաց թողնելու պատճառը: Փաստաբանը միջնորդությունում պարզապես նշել է, որ Դիմողն անկախ իր կամքից է բաց թողել դատավարական ժամկետը, սակայն այդ ժամկետի բաց թողումը Դիմողի կամքից կախված չլինելու կամ հարգելի լինելու հանգամանքներն ըստ էության չի նկարագրել և չի բացահայտել:

Այսինքն. Փաստաբանը հայցադիմումը ներկայացնելու բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդությամբ ըստ էության չի նշել նաև հայցադիմումը ներկայացնելու ժամկետի **բաց թողնման պատճառները, ուստիև չի հիմնավորել այդ պատճառների հարգելիությունը**:

Միաժամանակ Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ հայցադիմումին կից, Փաստաբանը կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտի դեմ վիճարկման հայցատեսակով հայցադիմում կազմելիս և ներկայացնելիս, վարչական ակտի կատարման կասեցման միջնորդություն

ներկայացնելու փոխարեն կազմել և Դատարան է ներկայացրել հայցի ապահովման միջնորդություն, որը չէր կարող բավարարվել վիճարկման հայցի պարագայում:

Փաստաբանի վերը նշված գործողությունները վկայում են այն մասին, որ Փաստաբանն իր վարքագծով ի ցույց է դրել, որ չի տիրապետում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 19-րդ, 54-րդ, 73-րդ, 80-րդ 83-րդ, 91-րդ հոդվածների բովանդակությանը կամ առնվազն կասկածի տակ է դրել դրանց տիրապետելու հանգամանքը, այսինքն՝ չի տիրապետել վարչական դատավարության իրավունքի ճյուղի կիրառելի կարգավորումներին, իսկ տիրապետելու դեպքում՝ գործել է այդ կարգավորումներին ոչ համահունչ:

Բ. Պատասխանելով երկրորդ հարցին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *վարչական դատարանը հայցադիմումը* ***վերադարձնում է*** *պատշաճ հիմնավորմամբ՝* ***նշելով բոլոր առերևույթ սխալները:***

Օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***հայցադիմումում թույլ տրված սխալները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ տասնհինգօրյա ժամկետում****, վարչական դատարան* ***կրկին ներկայացվելու դեպքում*** *հայցադիմումը վարույթ ընդունված է համարվում սկզբնական ներկայացման օրը:*

Օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի իմաստով՝ ***վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են*** *վարչական դատարանի* ***հայցադիմումը վերադարձնելու մասին*** *դատական ակտը:*

Օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***միջանկյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոք*** *կարող է բերվել օրենքով նախատեսված դեպքերում՝* ***մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետը:***

Օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ *վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի* ***131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ*** *են մտնում դրանք* ***ստանալուց 5 օր հետո:***

Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի 1-ին և 2-րդ նախադասությունների համաձայն՝ ***փաստաբանն իրավունք ունի՝ դիմելու պետական****, տեղական ինքնակառավարման* ***մարմիններին****, (…) իրավաբանական օգնություն ցույց տալու համար* ***անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական*** *և տեղական ինքնակառավարման* ***մարմինները պարտավոր են տասնօրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները,*** *(…):*

Վերը նշված իրավական նորմերի տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանման արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում կայացնելիս Դատարանը պարտավոր է որոշմամբ նշել բոլոր առերևույթ սխալները: Հայցադիմումը վերադարձնելու որոշմամբ

Դատարանը հայցվորին տրամադրում է 15-օրյա ժամկետ հայցադիմումում թույլ տրված սխալներն ուղղելու և այն կրկին ներկայացնելու համար: Ընդ որում հայցադիմումը վերադարձնելու մասին ՀՀ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը ենթակա է բողոքարկման և կարող է բողոքարկվել այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Նման պայմաններում. եթե փաստաբանը ստանում է այն հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը, որին կից ներկայացրել էր հայց ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն, ապա Փաստաբանը, ելնելով վստահորդի օրինական շահերից, պարտավոր է կատարել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի հայցադիմումը վարույթ ընդունվի, այդ թվում օրինակ՝ բողոքարկել համապատասխան դատական ակտը, կամ, եթե կոնկրետ դեպքում դա հնարավոր է՝ ներկայացնել նոր հայց՝ կից նոր միջնորդությամբ, կամ այլ իրավաչափ ակտիվ գործողություններ: Այլ խոսքով, փաստաբանը, ելնելով դեպքի առանձնահատկություններից, պարտավոր է կա՛մ որոշումը ստանալու պահից 5-օրյա ժամկետում վերաքննիչ բողոք ներկայացնել, կա՛մ ստանալու պահից 15-օրյա ժամկետում ուղղել սխալները և հայցադիմումը կրկին ներկայացնել ՀՀ վարչական դատարան, կա՛մ ներկայացնել նոր հայց՝ անհրաժեշտության դեպքում նոր միջնորդությամբ:

Միևնույն ժամանակ փաստաբանն իր վստահորդի հանձնարարությունները պատշաճ կատարելու համար իրավունք ունի փաստաբանական հարցումներ կատարել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններ, իրավաբանական անձանց: Պետական մարմիններն իրենց հերթին պարտավոր են հնգօրյա ժամկետում պատասխանել փաստաբանական հարցմանը և փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը կամ տեղեկությունները:

Տվյալ դեպքում Փաստաբանի կողմից Դիմողի անունով կազմված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ վարչական դատարան: Նշված հայցի հիման վրա հարուցվել է թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործը, որով Դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 2-ին կայացրել է «Հայցադիմումի ընդունումը մասով մերժելու և **մասով վերադարձնելու մասին**» որոշում: Հայցադիմումը մասով վերադարձվել է այն պատճառաբանությամբ, որ անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը կնքվել **է *ոչ թե 28.11.2017 թվականին, այլ 16.05.2022 թվականին անցկացված հարկադիր էլեկտրոնային աճուրդի հիման*** *վրա, իսկ հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքի վերականգնումը հնարավոր կլինի իրականացնել՝ որպես հիմնական պահանջ,* ***16.05.2022 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդի վիճարկման հայցի շրջանակում:***

Այնուհետև Փաստաբանը ուղղել է սխալները և դիմողի անունով կազմված հայցադիմումը կրկին ներկայացրել է ՀՀ վարչական դատարան: Այս անգամ ևս Դատարանը 2022 թվականի դեկտեմբերի 16-ին կայացրել է հայցադիմումը վերադարձնելու մասին որոշում, սակայն այլ պատճառաբանությամբ: Վերադարձի հիմք է եղել այն, որ ***հայցվորը չի ներկայացրել 16.05.2022 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին իրազեկվելու օրվա վերաբերյալ տեղեկություն և***

ապացույց:

Մինչդեռ Դատարանը Օրենսգրքի 79-րդ հոդվածի 5-րդ մասի իմաստով պարտավոր էր հայցադիմումը վերադարձնելու մասին 2022 թվականի դեկտեմբերի 2-ի որոշմամբ պատշաճ հիմնավորմամբ՝ նշելով **բոլոր առերևույթ սխալները՝** նշելով նաև այն, որ հայցվորը չի ներկայացրել 16.05.2022 թվականի հարկադիր էլեկտրոնային աճուրդի մասին իրազեկվելու օրվա վերաբերյալ տեղեկություն և ապացույց (այն սխալը, որը նշվել է Դատարանի 16.12.2022թ. որոշմամբ), որպեսզի հետագայում **մեկ այլ առերևույթ սխալի** հիմքով հայցը կրկին վերադարձնելու մասին որոշում չկայացներ: Առնվազն այս առումով առկա էր վերաքննիչ բողոք ներկայացնելու հիմք, ինչը հաջողվելու դեպքում կարող էր հանգեցնել հայցի ընդունմանը վարույթ, սակայն **Փաստաբանը Դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի որոշման դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացրել ՀՀ վերաքննիչ վարչական դատարան, ինչի արդյունքում հայցն այդպես էլ քննության չի ընդունվել, և Դիմողի իրավունքները մնացել են դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորության չարժանացած:**

Դատարանի նշված որոշումը ստանալուց հետո Փաստաբանը կրկին հայցադիմում նույնպես չի ներկայացրել Դատարան: Այս առումով, 2023 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ Հանձնաժողովի անդամ Հայկ Սահակյանը, դիմելով Փաստաբանին, արձանագրում է հետևյալ փաստը.

«Ձեր վկայակոչված գործով Դատարանը երկրորդ անգամ վերադարձրել է և դուք կրկին չեք ներկայացրել»

Այնուհետև Փաստաբանն ասում է.

*«Ինչո՞ւ պետք է ներկայացնեի, երբ որ **Բարսեղը խնդրել է, որ այլևս շարունակություն չլինի:***

Հանձնաժողովի նույն նիստի ժամանակ Փաստաբանն ասում է.

*«Ես նկատի ունեմ այն բանը, որ **Նադոյանը, ինքը խնդրել է, որ շարունակություն չլինի գործին**...»*

Հանձնաժողովի անդամ Հայկ Սահակյանը հարցնում է

*«**Ո՞ւմ է խնդրել**»:*

Ի պատասխան նշված հարցին՝ Փաստաբանը պատասխանում է.

*«**Ինձ: Ինձ խնդրել է, որ այլևս շարունակություն չտանք**»:*

Մինչդեռ սույն կարգապահական գործում առկա չէ որևէ ապացույց թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործը չշարունակելու վերաբերյալ Դիմողի խնդրանքի, Դիմողի կողմից Պայմանագրով Փաստաբանի կողմից մատուցվող ծառայություններից հրաժարվելու վերաբերյալ: Հանձնաժողովի նույն նիստի ժամանակ պատասխանելով Հանձնաժողովի անդամ Հայկ Սահակյանի այն հարցին, թե գործին շարունակություն չտալու փաստի վերաբերյալ Փաստաբանը ներկայացրե՞լ է որևէ ապացույց, Փաստաբանը ևս նշեց, որ ոչ, ինչպես կարող էր ներկայացնել, եթե հեռախոսով է

զանգել և ասել, որ այլևս չշարունակի գործը:

2023 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ, պատասխանելով Հանձնաժողովի անդամ Կարինե Բաղդասարյանի այն հարցին, թե բողոքարկե՞լ է Վերաքննիչ վարչական դատարան հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումները, Փաստաբանը նշեց հետևյալը.

*«Տիկի՛ն Բաղդասարյան, ես Ձեզ ասում եմ, **Բարսեղը թույլ չտվեց շարունակեմ գործը, ինքը խնդրեց, որ վերջացնենք գործը**, քանի որ արդեն հարցերը կարգավորել էր այնտեղ, իհարկե ինքը ինձ այդպես չասաց, բայց ես իմացա, որ տարել էին, ծեծել էին, չգիտեմ ինչեր էին արել, վախեցրել էին, մի խոսքով փակեց այդ հարցը, ինքը ինձ թույլ չտվեց ...»*

Այսպիսով Փաստաբանը որպես թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով Դատարանի 2022 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ վերաքննիչ բողոք չներկայացնելու և կրկին հայցադիմում չներկայացնելու պատճառ է նշել այն, որ Դիմողը հրաժարվել է իր ծառայություններից և արգելել է իրեն շարունակել թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով ներկայացուցչություն իրականացնելը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ նախ՝ Դիմողի կողմից Փաստաբանին թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործը չշարունակելու ցուցում տալու փաստը սույն կարգապահական գործում առկա որևէ ապացույցով չի հաստատվում: Երկրորդ՝ Հանձնաժողովը գտնում է, որ անկախ նշված փաստի առկայությունից, եթե Փաստաբանը Դատարանից ստանում է այն հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը, որին կից **ներկայացրել է հայց ներկայացնելու համար բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն**, ապա Փաստաբանը պարտավոր է կատարել **բոլոր** անհրաժեշտ գործողությունները, որպեսզի հայցադիմումը վարույթ ընդունվի: Փաստաբանը պարտավոր էր զգուշացնել Դիմողին, որ տվյալ դեպքում հայցադիմումը կրկին չներկայացնելու կամ վերաքննիչ բողոք չներկայացնելու դեպքում, արդեն իսկ ուշացումով ներկայացված հայցի հիման վրա հարուցված գործի ընթացքը չի շարունակվի, ինչը նշանակում է, որ հետագայում նոր հայց ներկայացվելու դեպքում շատ ավելի բարդ կլինի հայցադիմումը ներկայացնելու ժամկետի բացթողման հարգելիությունը հիմնավորելը և հայցի վարույթ ընդունմանը հասնելը:

Վերը նշվածի կապակցությամբ 2023 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ, Հանձնաժողովի անդամ Վերոնիկա Ալեքսանյանը Փաստաբանին հարցրեց.

*«Իսկ ներեցեք Դուք այդ ընթացքում իրեն բացատրել եք, որ եթե այդ դեպքում **չշարունակեք՝** ինչպիսի իրավական հետևանք կառաջացնի, քանի որ դատարանը երկրորդ անգամ վերադարձրել է՝ հնարավորություն տալով կողմին համապատասխան ապացույց ներկայացնելու դատավարական բաց թողնված ժամկետը հարգելի*

*համարելու համար: Արդյո՞ք դա Դուք բացատրել եք, որ **այդ փաստաթղթի ներկայացման պարագայում, գործը հնարավոր կլիներ շարունակել** և թեկուզ արհեստական կարգով ձգելու համար, ընթացքը ոչ մեկս չի կարող ելքը ասել, բայց դա հիմք կլիներ շարունակելու գործը»:*

Ի պատասխան վերը նշված հարցին, Փաստաբանը ըստ էության չպատասխանելով հարցին, նշել է հետևյալը.

*«Բարսեղը շատ լավ տիրապետել է այդ ամբողջին, ամբողջ տեղեկատվությանը, որովհետև ես իրենից ոչինչ չեմ թաքցրել, նախ ինքը դրել էր իրեն փաստաբանի տեղ և ասում էր, որ շատ լավ տիրապետում եմ, հասկանում եմ հետևանքներն էլ, ամեն ինչն էլ: Բացի այդ իհարկե, ի սկզբանե, երբ որ եկավ խնդրեց, որ հայցադիմումը ես արդեն ներկայացնեմ, ինքը շատ լավ տեղեկացված է եղել, **որ արդյունք չպետք է ակնկալի:** Ինքս բացատրել եմ, որ արդյունք հնարավոր չէ, որ ակնկալես, որովհետև չի լինելու, բռնելու տեղ մենք չունենք, այսպես կոպիտ ասեմ: Ինքը ինձ խնդրեց, ասեց, որ մենք պայմանավորվածություն ունենք, ես խնդրում եմ միայն **հայցադիմումը ներկայացրու ժամկետ շահելու համար**:»*

Փաստորեն Փաստաբանը, ըստ իր հայտարարության, Դիմողին զգուշացրել է միայն այն մասին, որ Դիմողը նշված գործով արդյունք չի ունենա, այսինքն հօգուտ Դիմողի վճիռ չի կարող կայացվել, և հայցադիմումը ՀՀ վարչական դատարան է ներկայացվում միայն ժամանակ շահելու համար: Մինչդեռ Հանձնաժողովի անդամ Վերոնիկա Ալեքսանյանի հարցը վերաբերվում էր երկրորդ անգամ վերադարձի որոշումը ստանալուց հետո գործը չշարունակելու, այն է՝ կրկին հայցադիմում չներկայացնելու կամ Դատարանի որոշման դեմ վերաքննիչ բողոք չներկայացնելու դեպքում առաջացող իրավական հետևանքների մասին Դիմողին նախազգուշացնելուն: Ստացվում է, որ այդ հետևանքների մասին Փաստաբանը Դիմողին չի զգուշացրել, իսկ հակառակի մասին որևէ ապացույց չկա: Եթե անգամ Դիմողը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, ինչի մասին ևս, ի դեպ, չկա որևէ ապացույց, ապա նույնիսկ այդ պայմաններում Փաստաբանն իրավունք չուներ թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործը թողներ այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում Դիմողը կարող էր հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն: Փաստաբանը պարտավոր էր կազմակերպել թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով վերաքննիչ բողոքի կամ հայցադիմումի կրկին ներկայացումը և ներկայացնելուց հետո նոր միայն չշարունակեր զբաղվել այդ գործով, իսկ եթե Դիմողը կպնդեր, որ վարչական գործից պետք է հրաժարվել, ապա այդ հրաժարումը կարող էր կատարվել միայն դրանից հետո՝ Դիմողի ապացուցելի խնդրանքի ապահովմամբ: Այսինքն, այդ դեպքում Փաստաբանը գրավոր համաձայնություն կամ այլ փաստաթուղթ կվերցներ Դիմողից վերաքննիչ բողոք չներկայացնելու կամ հայցադիմումը կրկին չներկայացնելու, դրանից բխող հետևանքների ռիսկերը կրելու և նշված դատավարական փաստաթղթերը

ներկայացնելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ:

2023 թվականի օգոստոսի 17-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ պարզվեց նաև այն, որ մինչև թիվ ՎԴ/7401/05/22 վարչական գործով հայցադիմում ներկայացնելը, Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն ուղղված կատարողական վարույթի նյութերին ծանոթանալու վերաբերյալ դիմումը, որի պատասխանը Փաստաբանը ստացել է դիմումը ներկայացվելուց մոտավորապես 2 ամիս անց, կազմել է անձամբ Դիմողը: **Փաստաբանը փաստաբանական հարցում չի կատարել** կատարողական վարույթի նյութերին ծանոթանալու համար:

Մասնավորապես, Հանձնաժողովի նախագահ Տաթևիկ Շալջյանը Փաստաբանին հարցրել է.

«Բանավո՞ր էիք դիմել»:

Նշված հարցին պատասխանելով՝ Փաստաբանն ասել է հետևյալը.

*«Չէ գրավոր **Բարսեղն անձամբ ինքը գնացել գրել է,** Բարսեղը անձամբ»:*

Փաստաբանի կողմից փաստաբանական հարցում կատարվելու դեպքում ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կաշկանդված կլիներ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով նշված 10 օրյա ժամկետով և մեծ է հավանականությունը, որ այդքան ուշ չէր տրամադրի կատարողական վարույթի նյութերը Փաստաբանին:

Այսպիսով Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը չի կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար **բոլոր անհրաժեշտ գործողությունները,** ինչով և պայմանավորված Դիմողին ցույց չի տվել բարեխիղճ ու պատշաճ իրավաբանական օգնություն:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև նշել այն, որ Վկան ցուցմունք տվեց նաև այն մասին, որ հայցադիմումը կազմվել է պատշաճ, որովհետև Փաստաբանը երկու օր շարունակ ժամանակ է տրամադրել հայցադիմումը գրելու համար, սակայն 2 օր ժամանակ տրամադրելն ինքնին չի խոսում հայցադիմումը պատշաճ կազմելու մասին, քանի որ այնուամենայնիվ հայցադիմումը ՀՀ վարչական դատարանը 2 անգամ վերադարձրել է, այսինքն՝ հայցադիմումը կազմվել է սխալներով, որոնց առկայությունը Փաստաբանը վերաքննիչ բողոքարկման միջոցով չի վիճարկել, և որոնց առկայությունը վերադաս դատական ատյանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով չի հերքվել:

Թեև Վկան ցուցմունք տվեց նաև այն մասին, որ Փաստաբանը կատարել է հանդիպումներ Ոստիկանությունում՝ մասնավորապես նշելով այն, որ գիշերը ժամը 8-ին Ոստիկանության Մասիսի աշխատակցի հետ է պայմանավորվածություն եղել, գիշերը 2:30-ի սահմաններում Փաստաբանը հետ է եկել տղամարդկանց հետ, սակայն ՀՀ Ոստիկանության դեմ ներկայացված հայցադիմումը ներկայացվել է Դիմողի հոր՝ Մանուկ Նադոյանի անունից: Դիմողի հայր՝ Մանուկ Նադոյանը չի հանդիսացել Փաստաբանի վստահորդը, նրա հետ փաստաբանական ծառայությունների մատուցման

պայմանագիր չի կնքվել: Նշված հայցադիմումի հիման վրա հարուցվել է թիվ ՎԴ/6727/05/22 վարչական գործը: Չնայած այն հանգամանքին, որ Փաստաբանը որպես ապացույց է ներկայացրել թիվ ՎԴ/6727/05/22 վարչական գործով «Դատալեքս» տեղեկատվական համակարգից կատարված քաղվածքը, սակայն նշված ապացույցը և Վկայի ցուցմունքը սույն կարգապահական գործով վերաբերելի ապացույց չեն, քանի որ Դիմողի հայր՝ Մանուկ Նադոյանը սույն կարգապահական վարույթի կողմ չի հանդիսանում:

Հիմք ընդունելով ողջ վերոգրյալը, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանը կոնկրետ դեպքում չի տիրապետել ՀՀ վարչական դատավարության իրավունքի ճյուղի՝ կոնկրետ դեպքում կիրառման ենթակա իրավակարգավորումներին կամ իր վարքագծով առնվազն կասկածի տակ է դրել դրանց իր տիրապետելու հանգամանքը, միևնույն ժամանակ Փաստաբանը չի կատարել Դիմողի հանձնարարության կատարման համար բոլոր անհրաժեշտ գործողությունները, ինչով պայմանավորված՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 ենթակետով:

Միաժամանակ Հանձնաժողովը հաստատված չի համարում Դիմողի այն պնդումը, որ Փաստաբանը կեղծել է Դիմողի ստորագրությունը, քանի որ նշված պնդումը կատարելով, Դիմողն իր դիմումին կից չի ներկայացրել այդ պնդումը հաստատող որևէ ապացույց: Դիմողը չի ներկայացրել նաև Հանձնաժողովի նիստերին և որևէ բացատրություն չի ներկայացրել ստորագրությունը կեղծված լինելու վերաբերյալ: Հանձնաժողովը գտնում է, որ նշված փաստն ապացուցելու պարտականությունը կրում է հենց Դիմողը, քանի որ Դիմողն է այդ փաստը վկայակոչել:

Ինչ վերաբերվում է Հայկ Հովսեփյանի և Արա Սարգսյանի հայտարարություններին, ապա դրանք իրենց բովանդակությամբ չեն վերաբերվում Դատարանի կողմից հայցադիմումը կրկին վերադարձվելուց հետո Փաստաբանի կողմից կրկին ներկայացվող հայցադիմում կամ վերաքննիչ բողոք չկազմելու և չներկայացնելու հանգամանքներին, ինչպես նաև չեն վերաբերվում հայցադիմումների մեջ դրանց վարույթ չընդունմանը հանգեցրած սխալներ թույլ տալու հանգամանքներին, ուստիև վերաբերելի ապացույց չեն:

7.2 Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի ենթադրյալ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 3.8.4 ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս* ***փաստաբանը պարտավոր է՝***

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել ***պայմանագրով ստացած հոնորարի այն մասը****, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

2) վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի

*հատուցման համար նախատեսված և **չծախսված միջոցները**.:*

*3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում **իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը** (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Կանոնագրքի վերը նշված կանոնի բովանդակությունից պարզ է դառնում, որ վճարովի իրավաբանական օգնություն ցույց տալու մասին պայմանագիրը լուծելու դեպքում, փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել նախապես վճարված հոնորարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի մատուցվել կամ աշխատանք չի կատարվել փաստաբանի կողմից: Փաստաբանը պարտավոր է նաև վերադարձնել վստահորդին փաստաբանական ծախսերի չծախսված միջոցները: Բացի այդ, փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ ձեռք բերված բոլոր փաստաթղթերի բնօրինակները:

Տվյալ դեպքում Փաստաբանին Կանոնագրքի 3.8.4 ենթակետով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը որոշելու համար, Խորհուրդը անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցերին.

1. Արդյո՞ք լուծվել է Դիմողի և Փաստաբանի միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը:

2. Եթե այո, ապա արդյո՞ք Փաստաբանը վերադարձրել է հոնորարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի մատուցվել:

3. Եթե այո, ապա արդյո՞ք Փաստաբանը վերադարձրել է հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները:

4. Եթե այո, ապա արդյո՞ք Փաստաբանը վերադարձրել է հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը:

Պատասխանելով նշված հարցերին, Հանձնաժողովը փաստում է, որ 2022 թվականի օգոստոսի 15-ին Փաստաբանի և Դիմողի միջև կնքվել է Իրավաբանական օգնություն ցույց տալու հանձնարարության վերաբերյալ № 015 պայմանագիրը (դատական ներկայացուցչության համար) **(այսուհետ՝ Պայմանագիր)**:

Պայմանագրի 1.1 կետով որպես Պայմանագրի առարկա է նշվել ՀՀ վարչական դատարան հայցադիմում ներկայացնելը, իրավաբանական խորհրդատվություն մատուցելը և այլ գործողություններ իրականացնելը:

2023 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած նիստի ընթացքում պարզվեց, որ պայմանագրի առարկան կազմել է ներկայացուցչությունը միայն ՀՀ վարչական դատարանում, այդ թվում նաև դատական նիստերին մասնակցելը (Փաստաբանը դա ընդունել է գործի քննության ընթացքում), ինչպես նաև իրավաբանական խորհրդատվություն մատուցելը և այլ գործողություններ իրականացնելը: Պայմանագրի առարկան չի ներառել ներկայացուցչությունը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանում:

Փաստաբանը և Դիմողը էլեկտրոնային հաղորդագրությամբ բանակցել են վերադարձվող գումարի վերաբերյալ, ինչը նշանակում է, որ նրանց միջև 2022 թվականի օգոստոսի 15-ին կնքված Պայմանագիրը փաստացի լուծվել է, քանի որ գումարի վերադարձի հետ կապված հարցերը քննարկվում են պայմանագիրը լուծելուց հետո կամ լուծելու հետ միաժամանակ: Փաստաբանի և Դիմողի էլեկտրոնային հաղորդագրության բովանդակությունից երևում է, որ Փաստաբանի և Դիմողի փոխադարձ կամարտահայտությունն ուղղված է Պայմանագրի լուծմանը:

Փաստաբանական ծառայությունները չեն մատուցվել Պայմանագրի առարկայում սահմանված ծառայությունների ամբողջ ծավալով, քանի որ ըստ Պայմանագրի առարկայի Փաստաբանը պետք է ներկայացուցչություն իրականացներ առաջին ատյանում և պայմանագրի կատարման պահ է համարվում ՀՀ վարչական դատարանի կողմից այդ գործով եզրափակիչ դատական ակտի կայացման պահը: Սակայն, տվյալ դեպքում, Դատարանը հայցադիմումը վարույթ չի ընդունել (2 անգամ հայցը վերադարձվել է), հետևաբար նաև գործը առաջին ատյանում չի քննվել, դատական նիստեր չեն նշանակվել և տեղի չեն ունեցել, և գործով եզրափակիչ դատական ակտ չի կայացվել:

Փաստաբանը թեև գրությամբ գրել է, որ 50000 ՀՀ դրամ կվերադարձնի, գործում առկա չէ գումարը վերադարձնելու հետ կապված որևէ ապացույց: Ավելին, 2023 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում Փաստաբանը հայտնեց, որ որևէ գումար չի վերադարձնելու, դեռ մի բան էլ ավել աշխատանք է կատարել:

Սույն կարգապահական գործի վարույթում առկա չէ նաև Փաստաբանի կողմից հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները Դիմողին վերադարձնելու վերաբերյալ որևէ ապացույց:

Պայմանագրում Փաստաբանը ձեռագրով գրել է *«Բոլոր փաստաթղթերը վերադարձրել եմ 21.02.2022 թ.»,* որի դիմաց առկա՝ Դիմողի ստորագրությունը, ըստ Փաստաբանի, վերաբերվում է Պայմանագիրը ստորագրելուն: 2023 թվականի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստում Փաստաբանը նաև ասաց, որ մեքենայում փոխանցել է փաստաթղթերը, մոռացել է հանձնման-ընդունման ակտը ներկայացնել Դիմողին, որ ստորագրի: Ուստի Փաստաբանի կողմից Դիմողին փաստաթղթերի բնօրինակները վերադարձնելու փաստը կարգապահական գործի վարույթում առկա ապացույցներով նույնպես չի հաստատվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ կողմերը լուծել են միմյանց միջև կնքված Պայմանագիրը, սակայն Դիմողին չի վերադարձրել հոնորարի այն մասը, որի դիմաց աշխատանք չի կատարվել, Դիմողին չի վերադարձրել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի չծախսված միջոցները, ինչպես նաև Դիմողին չի վերադարձրել Դիմողի կողմից Փաստաբանին հանձնված բնօրինակ փաստաթղթերը, ուստի Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 3.8.4 ենթակետով:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը,* ***առկա տույժերը****, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Կարգապահական տույժի տեսակն ընտրելիս Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ Փաստաբանի մոտ առկա տույժերը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանն արդեն իսկ ունի 1 կարգապահական տույժ՝ նկատողություն, որը ուժի մեջ մտած չէ և մարված չէ՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործով Փաստաբանի նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ անհրաժեշտ է կիրառել «խիստ նկատողություն», քանի որ մեկ անգամ Փաստաբանի հանդեպ արդեն իսկ կիրառվել է առավել մեղմ կարգապահական տույժ, այն է՝ «նկատողություն», սակայն այդ դեպքից հետո Փաստաբանը կրկին կարգապահական խախտում է թույլ տվել:

Ելնելով սույն որոշման 7.1 կետի «Ա» ենթակետում նշված՝ Փաստաբանի կողմից վարչական դատավարության իրավունքի ճյուղի համապատասխան իրավակարգավորումներին գուցեև չտիրապետելու կամ այդպիսի կասկած առաջացնալու հանգամանքներից, ինչպես նաև հայցադիմումը ոչ պատշաճ կազմելու վերաբերյալ հիմնավորումներից և հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի

նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Վարչական դատավարության առանձնահատկությունները» թեմայով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով՝

Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Նելլի Նորիկի Մովսիսյանի (արտոնագիր՝ թիվ 845) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացների պարտադիր մասնակցություն՝ «Վարչական դատավարության առանձնահատկությունները» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2 և 3.8.4 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23020-2-Ա
29 սեպտեմբերի 2023թ.
ք.Երևան